

**«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿՈՒՑ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

13.05.2013թ.

գ. Ծաղկուտ

Համաձայն ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի ապրիլի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ծաղկուտի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 25 կարգադրության, աշխատանքային խումբը մասնակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ Կառլեն Աբրահամյանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետի տեղակալ՝ Գագիկ Եղիազարյանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինարարության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Լյովա Հակոբյանի, ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ Արմեն Հարությունյանի, ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Ծաղկուտի գյուղական համայնքի ղեկավար Արզուման Կարախանյանի, Ծաղկուտի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010թվականի մարտի 1- ից մինչև 2013 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական և ֆինանսական հսկողությունն սկսվել է 2013 թվականի ապրիլի 25-ին և ավարտվել՝ 2013 թվականի մայիսի 2-ին:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

1) Համայնքի նոր ավագանին իր լիազորությունները ստանձնել է 2012 թվականի նոյեմբեր ամսին, սակայն դեռևս չի ընդունել իր կանոնակարգը /«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք 16-րդ հոդված 1-ին մաս/.

2) Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի պահանջը և իր պաշտոնն ստանձնելու օրվանից քառամսյա ժամկետում համայնքի զարգացման 2013-2016 թթ ծրագիրը չի ներկայացրել համայնքի ավագանու հաստատմանը, որի պատճառով հնարավոր չէ վերլուծել և գնահատել համայնքի զարգացման համար նախատեսված ծրագրերի արդյունավետությունը: Նախորդ 2008-2012 թվականների համայնքի զարգացման ծրագիրը կազմելիս հաշվի չի առնվել համայնքում առկա ռեսուրսներն ու ֆինանսական միջոցները և այն կազմված էր որոշակի թերություններով: Նրանում լիարժեք տեղեկություններ չեն ներկայացվել համայնքի սոցիալական և տնտեսական իրավիճակի մասին, չեն ներկայացվել համայնքը բնութագրող անհրաժեշտ վիճակագրական տվյալներ: Չեն տրվել համայնքի բյուջեի ֆինանսական